Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

____ _____ -ի 2021 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի N 46-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 134-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 46-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները՝

- Որոշման N 1 հավելվածում լրացնել 4.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

4.1. Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում գործնական պարապմունքների անցկացման ուղղություններն են՝

- տարահանում.
- պատսպարում.
- անհատական պաշտպանության միջոցների կիրառում.
- անվտանգության վարքականոնների կիրառում երկրաշարժի դեպքում.
- անվտանգության վարքականոնների կիրառում հրդեհի դեպքում.
- անվտանգության վարքականոնների կիրառում այլ արտակարգ իրավիճակների դեպքում.
- հրդեհաշիջման միջոցների և սարքավորումների կիրառում.
- հրդեհաշիջման իրականացում.
- առաջին օգնության ցուցաբերում.
- առաջին հոգեբանական աջակցության ցուցաբերում.
- փրկարարական գործ.
- տրանսպորտային, հրշեջ-փրկարարական և հատուկ տեխնիկայի շահագործում.
- կապի ապահովում.
- հետախուզություն/իրավիճակի գնահատում.
- ականազերծման աշխատանքների կատարման ժամանակ անվտանգության կանոնների պահպանում.
- արդյունաբերական պայթեցման աշխատանքների կատարման ժամանակ անվտանգության կանոնների պահպանում.
- բարձրության վրա աշխատանքների կատարման ժամանակ անվտանգության կանոնների պահպանում.
- կրակային և հրդեհավտանգ այլ աշխատանքների կատարման ժամանակ հրդեհային անվտանգության կանոնների պահպանում։».
- Որոշման N 1 հավելվածի 5-րդ կետում լրացնել 11.1-ին ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

11.1) **գործնական պարապմունք**՝ գործնական հմտությունների և կարողությունների զարգացման ուսուցման և պատրաստման ձև.

- Որոշման N 1 հավելվածի 6-րդ կետում լրացնել 8.1-ին ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

8.1) գործնական պարապմունք.

- Որոշման N 1 հավելվածում լրացնել 1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

15.1. Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման միջոցառումների վերաբերյալ ներկայացնում է առաջարկություններ։

- Որոշման N 2 հավելվածում լրացնել 8.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

88.1.	Գործնական պարապմունք	ըստ անհրաժեշտության ՀՀ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ղեկավարների որոշմամբ/հրամաններով	մինչև 2 ժամ	լիազորված մարմին ՀՀ պետական, պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններ, կազմակերպությունների ղեկավարներ	ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ներկայացուցիչներ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ